

## ՏԻԳՐԱՆ Բ.Ի ԱՐԾԱԹՆԵՐՈՒ «ԴՐԱՄԱԳԻՒՏ» ՄԼ

Ներածական

Արեւմտեան Եւրոպայի բանասէրները, Հիմնուած Հոսմէական աղ-  
րիւրներու վրայ, ծանօթ էին Տիգրան Մեծի գործունէութեանց հետ:  
Առաջին անգամ, 1664 թուականին, Տիգրան Մեծի մակդիրը յիշուեցա-  
ե. Սպանհնեմի<sup>1</sup> կողմէ. իսկ 1671ին առաջին անգամ իր չորեքրամ-  
հանը տպուեցաւ նոյն Հեղինակին մէկ ալլ աշխատանքին մէջ<sup>2</sup>:  
Նուազագոյն երկու պատճառներ կան թէ ինչո՞ւ այս զրամի տպուեցաւ  
առաջին անգամ: Արտաշէսիան հարստութեան դրամներուն ծիրին մէջ,  
ինչպէս նաև Տիգրան Մեծի զրամներուն միջեւ, արծաթեայ չորեք-  
զրամնեանը ամէնէն հասարակին ու դրամահաւաքներուն կողմէ ամէնէն  
շատ փնտուածն է՝ իր գեղեցկութեան, մեծութեան և ընդհանուր  
տեսքին պատճառու: Էստ պատմարան և զրամագէտ ժագ դը Մոր-  
գանի, Տիգրան Մեծի չորեքրամնեանը Ասոյ զրամներուն ամէնէն  
գեղեցիկ գոհարներու կարգին պէտք է զատել<sup>3</sup>:

Տիգրան Բ., որդին Տիգրան Ա.ի, պատանդ տարուեցաւ Պարթե-  
ւաստան, երբ Հայաստան ձախողեցաւ. Պարթեւաստանի ներխուժման  
դէմ իր անյաջող պայքարէն: Տիգրան Ա.ի մահանալուն 95 Ն.Ք.,  
Տիգրան Բ. ազատ արձակուեցաւ «Յօթմանասուն հովիաններ»ուն փո-  
խարէն, զոր Պարթեւաստան պահանջեց իբր փրկագին<sup>4</sup>:

Երբ Տիգրան պատանդ էր Պարթեւաստան, հոն շահեցաւ արքունի  
համակրանքը ու ամբացաւ պայքարելու, նուածելու և քաղաքակա-  
նութեան արուեստին: Ազատ արձակուելէ յիսոյ ամուսնացաւ Պոն-  
տոսի Միհրդատ Զ. Եւպատորի զստեր, կցեց Փոքր Հայքը (Շոփք) Մեծ

1. SPANHEM E., *Dissertatio de praestantia et usu numismatum antiquorum*, Հռովմ, 1664, էջ 115, 132, 137.
2. SPANHEM E., *Dissertationes de praestantia et usu numismatum antiquorum*, Ամսիեր-  
անմ, 1671, Հասոր Ա. , էջ 454-457.
3. Գ. ՄՈՒՐԳԱՆ Ժ., Հայ ժողովուրդի պատմութիւնը, Պոտքը, 1947, էջ 112:
4. Հայ ժողովուրդի պատմութիւնը, Հասոր Ա. , Երևան, 1971, էջ 556:

Հայրին, վերագրաւեց «հօփանասուն հովիտներ»ը, զոր Պարթևաստանին զիջած էր, զրաւեց միջազնաքը, ապա «Հրաւիրուեցաւ» կատագարելու Սուրբան, Լիբանանն ու Պաղեստինը<sup>5</sup>:

Արքայից արքայ Տիգրանը ուներ բնդարձակ կայսրութիւն մը և նորակերտ քաղաքամայր մը, Տիգրանակերտ, զետեղուած՝ իր կայսրութեան աշխարհազրական կեզրոնը: Իր զրաւները կոխուեցան բարձրաքանուակ ոճով՝ զանազան զրամահատարաններուն մէջ՝ Արտաշատ, Տիգրանակերտ, Անտիոք, Դամասկոս և այլ վայրեր: Դրամագէտներ կը համաձայնին, թէ չորեքզրամեաններ պատկերուած Անտիոքի Բախտին նկարով եւ ԱՅԱԼԵΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ արձանազրութեամբ, թողարկուած են Անտիոքի զրամահատարանը 83-69 Ն.Ք.:

Տիգրան զրաւեց ու զեկավարեց բոլոր տեղական զրամահատարանները, որոնք բաս սելեկեան աւանդութեան, գարերով կոփած էին զեղասիազ զրամական համակարգեր: Անտիոքի զրամահատարանը հոչակաւոր էր արծաթեայ չորեքզրամեան զարնելու համար<sup>6</sup>:

Տիգրան Մեծի դրամական համակարգը նաեւ կը պարունակէ արծաթեայ զրամաթաներ, որոնց ետին պատկերուած զիցուհին՝ կը ներկայացնէ Արտաշատի Բախտը: Դրամագէտներու միասնական եղբակացութիւնն է, թէ բոլոր զրամաթաները, որոնք զրուազուած են Բախտի նկարով եւ յունատառ ԱՅԱԼԵΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ արձանազրութեամբ, թողարկուած են Արտաշատ:

Տիգրան թողարկեց նաեւ բազմաթիւ պղնձեայ զրամներ, որոնց ետին կը նշամառուի Բախտ, Վահագն, Յաղթանակ, ամաթեղջիւր, ցորին, արմաւենիփի ճիւղ, ասորուշան, ծի, փիղ և այլ աւանդական տիպեր: Այնուամենայնիւ, իր զեղասիազ արծաթեայ չորեքզրամեանն է, զոր կը զարգարէ զրամազիտական երկերու էջերը՝ իրրեւ հոյակապ նմոյշ զիմանկարային արուեստի<sup>7</sup>:

5. Նշուած աշխատանք, էջ 556:

6. Վաճառաշահ Անտիոք քաղաքը նաեւ հանդիսացաւ Հարստութեան ազրիք մը Տիգրանի համար: Արեւելքի ազրանքն ու հարստութիւնը Անտիոքի չուկաներուն մէջ ծախուեցն՝ փոխազրուեց համար Արեւմուտքի չուկաները:

7. Հաս պատմական ազրիքներու, երբ Լուկասոսը բոյսը գանձերը բանազրաւած էր և իր զինուորներուն միջոցաւ Տիգրանակերտը կողազուտի ենթարկած, փողերանոցի զրաւուած գանձերէն, իրեւ աւար, իւրաքանչիւր հոռմէացի զինուորին բաժին կ'իւնայ 800 զրամատ արծաթ զրամ: Հու ոչ մէկ խօսք չորեքզրամեանի մասին, այլ բոլոր աւար զրամայէ բազկացած է: Տէ՛ս ՄԱՆԱԿԱՆ ՖևԱՆ Յ., *Tigrane II et Rome, Լիգրոն*, 1963, էջ 121, նաեւ Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, Հասոր Ա., Երեւան, 1945, էջ 207:

8. NEWELL E. T., *Royal Greek Portrait Coins*, Բէյսին, Արևորանսին, 1937, էջ 56-59:

JENKINS G. K., *Ancient Greek Coins*, Նիւ Եղր, 1972, էջ 271-272, նկար 663-664:

BABELON J., *Le portrait dans l'antiquité d'après les monnaies*, Փարփա, 1950, էջ 197, ասխատակ VII, թիւ 7:

իր առաջնակարգ, բնդարձակ եւ կանոնաւոր կորպուսին մէջ, Զարեհ Պտուկեան կը դասաւորէ Տիգրան Մեծի պատկանող մօտառութափչս 200 չորեղդրամեան եւ 80 դրամամա, որոնք կը յատկացուին Անտիոքի եւ Արտաշատի դրամահատարաններուն<sup>9</sup>: Պտուկեան, Հիմնուած ակողմի դիմանկարին ու բեկողմի նշանագրերուն վրայ, կը դասաւորէ 36 չորեղդրամեաններու եւ 39 դրամամաններու տարրերակներ: Պտուկեանի կորպուսը հիմնուած է թանգարաններու, սեփական ժողովածուներու, վաճառքի եւ աճուրդի գրուած ցուցակագրութեանց դրամներուն վրայ: Իր կորպուսի չորեղդրամեաններուն մեծամասնութիւնը (աւելի քան 2/3ը) զատաւորուած են թիւ 17, 19, 20 եւ 21ի ներքեւ: Ցարդ Արտաշէսիան հարստութեան եւ Տիգրան Մեծի դրամներու մասին հրատարակուած բոլոր բանադրութեանց շարքին, Պտուկեանի բանասիրութիւնը ամէնէն մանրազնին, կանոնաւոր եւ խնամէնալնէ: Սակայն եւ այնպէս, շատ նիւթեր չեն բացատրուած եւ բազմաթիւ հարցեր կը մնան անպատասխան: Հետազոտութիւններ անհրաժեշտ են լուսաբաներու համար ժամանակագրութիւնը, մենագիրները, դաշտի նշանագրերը եւ այլ հարցեր առ ի գոհացում բոլոր դրամագիտ բանասէրներու:

### «Դրամագիւտ»ի մասին

Դրամագիւտեր մեծապէս կը սատարեն դրամագիտութեան յառաջդիմութեան: Խումբին մէջ միատեղ յայտնարերուած դրամները ուսումնասիրելով՝ նոր ասպարէզներ կը բացուին ձտելու դրամներու ժամանակագրական շրջանը, աիրականերու գոյութիւնն ու ժամանակագրութիւնը: Ինչպէս նաեւ դրամագիւտ մը լոյս կը սփռէ երկրին տնասութեան ու կուտակուած հարստութեան մակարդակին, ընկերային կազմակերպութեան, հիմնարկներուն, արտաքին քաղաքականութեան, վաճառականութեան, մետաղագործութեան արուեստի եւ քաղաքակրթութեան մակարդակին վրայ: Դրամագիւտերը ժամանակալիցից յիշատակներ են, որոնք անփոփոխ մեզի հասած են դարերու ընդմէջն:

Վերջին տասնամենակներու ընթացքին՝ Տիգրան Մեծի պատկանող դրամագիւտեր յիշուած ու տեղեկագրուած են: Սակայն, գանձին կադմէն ներս չորեղդրամեաններ սակաւաթիւ եղած են: Քննելով Տիգրանի արծաթեայ դրամներուն տեղեկութիւններն ու յիշատակութիւնները կ'ունենանք հետեւեալ պատկերը.

9. ՊՏՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, Արտաշէսան հարստութեան դրամները (յետ այսու ԱՀԴ), Վիեննա, 1983, թիւ 16-48, 50-87:

Գանձ 1. Սառնակութի գանձը, կազմուած է 373 դրամէ: Մեծամասնութեամբ բաղկացած է 311 հոռմէական դրամէ. Տիգրան Բ.ի վերապրուած է 1 չորեքդրամեան և 7 դրամմա, Արտաւազդ Բ.ին արուած է 2 դրամմա<sup>10</sup>:

Գանձ 2. Արտաշատի գանձը, կազմուած է Տիգրան Բ.ի պատկանող 1 չորեքդրամեանէ և 27 դրամմայէ: Բոլոր դրամմաները, բացի մէկ դրամմայէ, արձանագրուած են «Արքայից արքայ Տիգրանի» յունատառ մակդիրոց<sup>11</sup>:

Գանձ 3. Նիւ նորքի վանառականի գանձը, կազմուած է Տիգրան Բ.ի պատկանող 1 չորեքդրամեանէ ու 22 պղնձեայ դրամէ<sup>12</sup>:

Գանձ 4. Զ. Պոտուկեանի գանձը, կազմուած է 34 կտորէ: Վերապրուած է հետեւեալներուն. Տրիբազ՝ 1 արծաթ դրամ, Միհրդատ Հայաստանի՝ 3 արծաթ դրամ, Կոմմագենէ՝ 4 պղնձեայ դրամ, Տիգրան Ա՝ 3 պղնձեայ դրամ, Տիգրան Բ՝ 6 չորեքդրամեան և 1 դրամմա ու 14 պղնձեայ դրամ, Արտաւազդ Բ՝ 1 պղնձեայ դրամ, Տիգրան Դ՝ 1 պղնձեայ դրամ<sup>13</sup>:

Գանձ 5. Վենետիկի Միհրարեան գանձը, միայն յիշուած է Տիգրան Բ.ի 12 չորեքդրամեանի գիւտը<sup>14</sup>:

Գանձ 6. Ճ. Կէվրէքեանի գանձը, միայն յիշուած է Տիգրան Բ.ի 6 չորեքդրամեանը, որ մէկ մասն է աւելի ուշ յիշատակուած 14 չորեքդրամեան գանձին<sup>15</sup>:

Գանձ 7. Թովուզի գանձը, բաղկացած է 102 և 62 կտոր դրամէ: Ասոնցէ 4ը (2 չորեքդրամեան, 2 դրամմա) վերապրուած է Տիգրան Մեծին<sup>16</sup>:

Անկասկած, վերոյիշեալ յայտնաբերումներէն զատ, զոյութիւն ունեցած են Տիգրանի դրամներուն պետածոյ գիւտերը: Ոմանք լուելեայն իրենց ճամբան գտած են զէպի Արեւմուտք և պատահարար ծախու դրուած են ամերիկեան կամ եւրոպական վաճառքի կամ աճուրդի «կատալոգ»ներուն մէջ: Նման փոքր գանձերու գիւտը յաճախ կը պատահէի Հայաստան, Թուրքիա, Սուրբիա, Լիբանան, Իրաք և Պարսկաստան: Ասորագրեալ թէ՛ լսած եւ թէ՛ աչքով տեսած է Տիգրան Մեծի

10. ՄՊՈՒԾԵՂԵԱՆ Խ. Ա., Հայաստանի դրամական գանձերը, Երևան, 1973, 184 էջ, 70 տախոսակ, քարտէս 1:

11. ՄՊՈՒԾԵՂԵԱՆ Խ. Ա., «Արտաշատի Հայկական գանձը», Հայ Դրամագիտական Հանդիսանք, Ա. Մրգան, Հասոր Դ., 1978, էջ 105-128, տախոսակ XII-XIV:

12. ՊՏԾՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, Տիգրան Մեծի պղնձեայ դրամներու դրամագիւտ մը և Արտաշեան հարատորեալ դրամագիւտ մը, Հայ Անձելը, 1991, էջ 20, գանձ Բ:

13. ՊՏԾՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, Կշռած աշխատանք, էջ 26-29:

14. ՊՏԾՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, ԱՀԴ, Catalogue, էջ 9, թիւ 20:

15. ՊՏԾՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, ԱՀԴ, Catalogue, էջ 9, թիւ 20 և էջ 13, թիւ 44:

16. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Հ., «Հնագիտի օրագրից», Սովետական Հայաստան (օրաթերթ, 20 գոստս 1957), թիւ 196, էջ 3:

չորեքդրամնանի ներկայութիւնը հայկական եւ օտար դրամներու հետ միասնական նոյն զրամագիւտի մէջ: Դժբախտաբար Մերձաւոր Արեւելքի երկիրներու քաղաքական օրէնքները չեն վարձատրեր անհատները՝ որոնք հնագրամներ կը գտնեն, այլ կառավարութիւնը կը պատժէ եւ իրենց ձեռքէն ծրի կը խէ՝ առանց նիւթական վարձատրութեան: Հետեւանք՝ ժողովուրդը կը զիմէ զաղունապահութեան ու մաքսանենդութեան եւ բանասէր դրամագէտը չի՝ կրնար իմանալ դրամագիւտին յայտնաբերման տեղադրութիւնը, թուականը եւ կազմին հարազարդադրութիւնը:

Վերջերս գանուած Տիգրան Մեծի արծաթեայ դրամներու գանձ մը (կամ քանի մը գանձեր), բաշխուած է հնագրամ վաճառող հասաւութեանց (1990): Էսա վստահէի աղբիւրի մը, գանձը բազկացած է 80 կտորէ<sup>17</sup>: Դրամագիւտերու զաղունապահութեան պատճառաւ, այս զանձին լլիւ քանակն ու ծիշտ յայտնաբերման վայրը կը մնայ անորոշ: Միեւնոյն ատեն, ո՞րեւէ դրամագիւտական տուեալներ չբաղուած ու չտեղեկագրուած գանձը ցիրուցան եղած եւ տարածուած է դասական դրամներու վաճառականներուն եւ դրամահաւաքներուն: Ներկայ «դրամագիւտ»ի բնորոշ արժէքը աւելի աչքառու կը գտնայ, երբ նկատի ունենանք, որ ցարդ Զ. Պառկեանի կողմէ զասաւորուած արծաթ դրամներու ընդհանուր քանակն է 200 չորեքդրամնան եւ 80 դրամին: Խոկ մեղի ծանօթ տեղեկագրուած ու յիշատակուած դրամագիւտերու արծաթները՝ ՅՇ չորեքդրամնան եւ ՅՇ դրամին:

Ներկայ աշխատանքը ձեռնարկ մըն է, որ կը ջանայ չրժանցել հայ դրամագիւտեան հանդէս կատարուած այս անտարբեր վերաբերմունքը: Եթէ հայ դրամագիւտեթիւնը պէտք է զարգանայ եւ ընդարձակուի՝ դրամագիւտերու եւ մեծ ժողովածուներու տուեալները անհամար է որ զբանցուին, վերյուծուին եւ ուսումնասիրուին: Այս ցուցակագրութիւնը պատրաստելու համար դրամագիւտական վաճառքի եւ աճուրդի ցուցակագրութիւններ քննուեցան՝ քաղելու անհրաժեշտ տեղեկութիւնները եւ վերականգնելու ընծայուած «դրամագիւտ»ը: Տիգրան Բ.ի արծաթ դրամներուն համար՝ շփում հաստատուեցաւ վաճառականներուն եւ դրամահաւաքներուն հետ, որոնք կրնային գնած ըլլալ նման հնագրամները: Անսարակուսելի փասս զոյութիւն չունի, թէ ցուցակագրութիւններէ քաղուած բոլոր դրամները կը պատկանին այս «դրամագիւտ»ին: Ընդունելի է, թէ ներկայ ցուցակագրութիւնը կրնայ պարունակել դրամներ, որոնք դրամագիւտին մաս կազմած չըլլան եւ պատկանած սեփական հաւաքածոյի մը կամ ալ վաճառականի մը պահեստին: Անկասկած, կան նաև «դրամագիւտ»ի

17. ՍԱՐԾԱՆ Լ. Ա., «Three Unreported Tetradrachms of Tigranes the Great», Հայ Դրամագիւտական Համելս, Ա. Դրչան, Հատոր ԺՀ., 1992, թիւ 2, էջ 37-38:

պատկանող ա՛յլ դրամներ, որոնք մեր ուշադրութենէն վրիպած կրնան ըլլալ: Հակառակ այս բոլոր թերութիւններուն, ներկայ յօդուածով ընծայուած գիտելիքները պիտի սատարեն ընդարձակելու մեր զրամացիտական հորիզոնները, քանի որ ներկայացուած «զրամագիւտ»ը կը պարունակէ նոր զիմանելար մը, մենագիրներ, գաշտի նշաններ և անոնց կապակցութիւնները:

Ցանկը չէ սպառած չուկային վրայ երեցած հնագրամներու բոլոր նմոյշները: Բայցմաթիւ ա՛յլ դրամներ նշմարուած են ցուցահանդէսներու մէջ եւ թերեւս ալ քանի մը վաճառքի եւ աճուրդի ցուցակառ զրութեանց մէջ, որոնք մեզի հասած ըրլան: Դժրախտաբար, կարելի չեղաւ քաղել ո՞րիւէ առևեալներ կամ նկարներ այս վրիպած դրամներու մասին: Բոււարար թող նկատուի յիշել, թէ այս քաղուածքէն զուրս մնացած դրամները չունին նոր տարրերակներ, չիմնականօրէն՝ հոռ արձանագրուողներէն չեն տարրերիր:

### «ԴՐԱՄԱԳԻՒԹ»Ի ԴԱՍԱՅՈՐՈՒՄ

«Դրամագիւտ»ը դասաւորուեցաւ ըստ Զ. Պտուկեանի Արտաշէսիանի հարատուքան դրամները երկին ուզգութեան, ուր դասաւորուած են Տիգրան Բ.Ի. վերագրուած 36 տարրեր չորեքդրամնեաններ, կոխուած՝ Անափոր եւ 39 զրամաններ՝ Արտաշատ: Ներկայացուած բոլոր զրամները կ'ենթադրուին որ կը պատկանին այս «զրամագիւտ»ին եւ զատաւորուած են ցուցակագրութեան մէջ: Աղիւսակ 1ի առաջին սիւնակը կու տայ զրամի իւրաքանչիւրին նշանակուած թիւը, երկրարդ սիւնակը՝ Պտուկեանի զիրքին վկայակոչուած թիւը. երր անհրաժեշտ եղած է՝ Պտուկեանի երկու թիւերը միատեղ զործածուած են ներկայացնելու զրամին երկու կողմերուն լաւագոյն նկարագրութիւնը: Երրորդ սիւնակը՝ կ'ընծայէ զրամներուն նոնիս արձանագրութիւնը: Չորրորդ սիւնակը զրամներու ծանրութիւնն է: Հինգերորդ եւ վեցերորդ սիւնակները ցոյց կու տան դաշտին մէջի նշանագրերն ու մենագիրները: Եօթներորդ սիւնակը կը ներկայացնէ զրամի խումբին յատկացուած տառերը: Ութերորդ եւ իններորդ սիւնակները ցոյց կու տան ակողմի ու բեկողմի կնիքներուն տրուած թիւերը (անզոյգ թիւերը ակողմին, զոյգերը՝ բեկողմին): Վերջին սիւնակը ցոյց կու տայ, թէ զրամը ո՞ր ժողովածոյին կը պատկանի, կամ այ նախապէս ո՞ր վաճառքի կամ աճուրդի ցուցակագրութեան մէջ յիշուած է: Դրախտաները ցուցակագրուեցան առանձին՝ աղիւսակ 2ին մէջ՝ աւելի պարզաբանուած ձեւով, քանի որ բոլոր նմոյշները իրամէ տարրեր են: Ցուցակագրուած դրամներուն նկարները դետեզուած են տախտակներուն վրայ:

Զորեքը բամբամները զատուեցան տասներեք հիմնական խումբերու (Ա-Խ), հիմնուած՝ ակողմի դիմանկարին ու խոյրի ատամներուն եւ իրենց բեկողմի մենագիրներուն ու զաշտի նշաններուն վրայ։ Դրախմաները դասաւորուեցան ինը տարբեր խումբերու<sup>18</sup>։

### ԴՐԱՄԻ ՏԻՊԵՐՈՒ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

#### ԶՈՐԵՔԻ ԲՈՂԱՄԻԱՅԻՆԵՐ

**Ա1 Ակողմ.** Տիգրան Մեծի կիսանդրին պատանիի դիմանկարով գէպի աջ, մաքուր ածլուած եւ զլիուն մարդարտաշար հինգ ժամփական խոյրի։ Խոյրին հինգ ատամները շինուած են իրարու վրայ նստած երկու գոհարներէ։ Արքայական ժամփակնը հանգուցուած է զլիուն ետին եւ ծայրերը ազատ ուևն ի վար կ'իշնեն։ Թագի ներքեւ միացած են ականչակալն ու վզկալլ։ Խոյրը զարդարուած է ութթեւանի աստղով՝ կողերուն մէկական արծիւ, որոնք իրարու կը նային։ Երիշակերպ հանգուցաւոր շրջափակ։

**Բեկողմ.** Անտիոք քաղաքին Բախտը, աշտարակածեւ թագը գըլիուն, քօղարկուած, ժայռի մը վրայ նստած, աջ ձեռքով արմաւենիի ճիւղ մը բոնած։ ոտքերուն տակ՝ Որոնզէս գեսի աստուածութիւնը մարմազնող երիտասարդ մը կը լողայ գէպի աջ։ Յունատառ խորագրութիւնը աջին՝ ΒΑΣΙΛΕΩΣ, ձափին՝ ΤΙΓΡԱՆΟΥ։ Դաշտին մէջ արմաւենի ճիւղի աջին՝ Ա։ | Ա մենագիրը ժայռին վրայ։ Դափնեպսակ շրջափակ։

**Ա2 Ակողմ.** Աւի նման, երիտասարդի դիմանկարով։

**Բեկողմ.** Աւի նման։

18. Իմ յասուեկ չնորհակալութիւնները Ճ. Կէմբէքեանին, Լ. Սարեանին, Ն. Ժամկոչեանին՝ Համբինեանին, որոնք իրենց զրամները տրամադրեցին նկարելու և ցուցակագրելու համար, ինչպէս նաև նկարիչ Ճ. Բուշտիւնեանին՝ Լ. Սարեանին բազմաթիւ դրամները նկարելուն համար։ Ընորհակալութիւններս նաև Կասիկալ Նիմիսամաթիկ Գրոււ (ԿնԱ, ԿՀ), Գերհարդ Հիլու (ԳՀ), Նիմիսամաթիկ Ֆայն Արթս (ՆՖԱ) եւ այլ հնագրամներու վաճառականներուն, որոնց վաճառքի և աճուրդի ցուցակագրութիւններ դրամներ նկարուեցան։

- Բ1 Ակողմ.* Ա1ի նման, երիտասարդի դիմանկարով:
- Բեկողմ.* Ա1ի նման, գաշտի աջին՝ Թ տառը, Ձ մենագիրը ժայռին վրայ:
- Բ2 Ակողմ.* Ա1ի նման, չափահասի դիմանկարով:
- Բեկողմ.* Բ1ի նման:
- Գ Ակողմ.* Ա1ի նման, երիտասարդի դիմանկարով, բայց խոյրը ունի եռանկիւնաձեւ հինգ գագաթ:
- Բեկողմ.* Ա1ի նման, գաշտի աջին՝ Ո մենագիրը, Հ մենագիրը ժայռին վրայ:
- Դ1 Ակողմ.* Ա1ի նման, չափահասի դիմանկարով:
- Բեկողմ.* Ա1ի նման, առանց գաշտի նշանի, Տ մենագիրը ժայռին վրայ:
- Դ2 Ակողմ.* Դ1ի նման:
- Բեկողմ.* Ա1ի նման, ժապաւէն արմաւենիի ճիւղը բռնող ձեռքին, առանց գաշտի նշանի, Տ մենագիրը ժայռին վրայ:
- Ե1 Ակողմ.* Ա1ի նման, չափահասի դիմանկարով, բայց խոյրը ունի եռանկիւնաձեւ հինգ գագաթ:
- Բեկողմ.* Ա1ի նման, ժապաւէն արմաւենիի ճիւղը բռնող ձեռքին, առանց գաշտի նշանի, Տ մենագիրը ժայռին վրայ:
- Ե2 Ակողմ.* Ե1ի նման:
- Բեկողմ.* Ա1ի նման, առանց ժապաւէնի, առանց գաշտի նշանի, Տ մենագիրը ժայռին վրայ:
- Զ Ակողմ.* Ա1ի նման, երիտասարդի դիմանկարով, բայց խոյրը ունի եռանկիւնաձեւ հինգ գագաթ:
- Բեկողմ.* Ա1ի նման, առանց գաշտի նշանի, Տ մենագիրը ժայռին վրայ:
- Է1 Ակողմ.* Ա1ի նման, երիտասարդի դիմանկարով, ետ քաշուած կզակ, փոքր եւ սրածայր քիթ, աչքը առանց բիրի, խոյրը ունի չատ բարձր եռանկիւնաձեւ հինգ գագաթ:

*Բեկողմ.* Ա1ի նման, դաշտի աջին՝  $\overline{\Gamma}$  մենագիրը, առանց մենագրի ժայռին վրայ:

*է2 Ակողմ.* է1ի նման:

*Բեկողմ.* է1ի նման, դաշտի աջին՝  $\overline{\nabla}$  մենագիրը, առանց մենագրի ժայռին վրայ:

*լ Ակողմ.* Ա1ի նման, չափահասի զիմանկարով, բայց խոյրը ունի հոանկիւնածեւ հինգ դադաթ:

*Բեկողմ.* Ա1ի նման, դաշտի աջին՝ (|), + մենագիրը ժայռին վրայ:

*թ Ակողմ.* Ա1ի նման, վայելչակազմ չափահասի զիմանկարով, բայց խոյրը ունի հոանկիւնածեւ հինգ դադաթ:

*Բեկողմ.* Ա1ի նման, դաշտի աջին Ա մենագիրը, ձափին՝ \*, Δ, M:

*Ժ Ակողմ.* Ա1ի նման, չափահասի զիմանկարով, բայց հինգ ասամները շինուած են իրարու վրայ նստած երկու գոհարներէ:

*Բեկողմ.* Ա1ի նման, առանց դաշտի նշանի, օտառը ժայռին վրայ:

*ի1 Ակողմ.* Ա1ի նման, չափահասի զիմանկարով, բայց հինգ ասամները շինուած են իրարու վրայ նստած երկու գոհարներէ:

*Բեկողմ.* Ա1ի նման, առանց դաշտի նշանի, Ց, Հ մենագիրները ժայռին վրայ:

*ի2 Ակողմ.* ի1ի նման:

*Բեկողմ.* ի1ի նման, ժապաւէն արմաւենիի ճիւղը բռնող ձևոքին, դաշտի աջին՝ (կէտ) ., Ց մենագիրը ժայռին վրայ:

*լ Ակողմ.* Ա1ի նման, չափահասի զիմանկարով, բայց հինգ ասամները շինուած են իրարու վրայ նստած երկու գոհարներէ:

*Բեկողմ.* Ա1ի նման, դաշտի աջին՝ Ց, | օտառը ժայռին վրայ:

*ի1 Ակողմ.* Ա1ի նման, երիսասարպի զիմանկարով, բայց հինգ ասամները շինուած են իրարու վրայ նստած երկու գոհարներէ եւ արքայական ժապաւէնը ծալք ունի:

- Բեկող.** Ա1ի նման, առանց դաշտի նշանի, Ա, Ա տառերը ժայռին գրայ:
- Խ2 Ակողմ.** Ա1ի նման:
- Բեկողմ.** Ա1ի նման, առանց դաշտի նշանի, Ա տառը ժայռին գրայ:

### Դրախտանիք

- ա Ակողմ.** Տիգրան Մեծի կիսանդրին գէպի աջ, զլխուն՝ մարգարտաշար հինգ ժանիքներով Հայկական խոյրը: Խոյրին հինգ ժանիքները եռանկիւնածեւ են: Արքայական ժապաէնը Հանգուցուած է զլխուն ետին եւ ծայրերը ազատ ուսն ի վար կ'իջնեն: Թազի ներքեւ միացած են ականջակալն ու վզակալն: Խոյրը զարդարուած է ութմեւանի աստղով որու ժամը Զի վրայի թեւը վերածուած է ասուպի մը: Ասազի կողքերուն մէկական արծիւ չիկայ: Կչաւոր շրջափակ:
- Բեկողմ.** Աստիքք քաղաքին Բախտը, աշտարակածեւ թազը զլիթիւն, քօղարկուած, ժայռի մը վրայ նստած, աջ ձեռքով արմաւենիի ճիւղ մը բռնած: ոտքերուն տակ՝ Որոնդէս դետի աստուածութիւնը մարմնացնող երիտասարդ մը կը լոզայ գէպի աջ: Յունաստան խորագրութիւնը աջին՝ ԱՅԱԼԵՈՅ, ձախին՝ ՏԻԳՐԱՆՈՅ: Դաշտին մէջ արմաւենի ճիւղի աջին՝ Շ:
- բ Ակողմ.** Տիգրան Մեծի կիսանդրին գէպի աջ, զլխուն՝ մարգարտաշար հինգ ժանիքներով Հայկական խոյրը: Խոյրին հինգ ժանիքները եռանկիւնածեւ են: Արքայական ժապաէնը Հանգուցուած է զլխուն ետին եւ ծայրերը ազատ ուսն ի վար կ'իջնեն: Թազի ներքեւ միացած են ականջակալն ու վզակալն: Խոյրը զարդարուած է ութմեւանի աստղով՝ կողքերուն մէկական արծիւ, որոնք իրարու կը նային: Կչաւոր շրջափակ:
- Բեկողմ.** Արտաշատ քաղաքին Բախտը, աշտարակածեւ թազը զլիթիւն, քօղարկուած, ժայռի մը վրայ նստած, աջ ձեռքով արմաւենիի ճիւղ մը բռնած: ոտքերուն տակ՝ Արաքս դետի աստուածութիւնը մարմնացնող երիտասարդ մը կը

լողայ դեպի աջ: Ցունատառ խորագրութիւնը աշխն՝  
BAΣΙΛΕΩΣ, ձափին՝ BAΣΙΛΕΩΝ/TΙΓΡΑΝΟΥ: Բախսի  
աշխն արմաւենիի ճիւղին վերեւ՝ ԷԼ տառերը, ճիւղին  
ներքեւը՝ Ճ տառը:

*Ա* Ակողմ. բի նման:

Բեկողմ. բի նման, արմաւենիի ճիւղին վերեւ՝ ԷԼ տառերը,  
ճիւղին ներքեւը՝ Թ տառը:

*Ա* Ակողմ. բի նման:

Բեկողմ. բի նման, արմաւենիի ճիւղին վերեւ՝ չԼ տառերը,  
ճիւղին ներքեւը՝ Ա տառը, զրամի ստորաբաժնին՝ ՅԿ  
տառերը:

*Կ* Ակողմ. բի նման:

Բեկողմ. բի նման, արմաւենիի ճիւղին վերեւ՝ չԼ տառերը,  
ճիւղին ներքեւը՝ Ա տառը, զրամի ստորաբաժնին՝ ՅԿ  
տառերը:

*Ա* Ակողմ. բի նման:

Բեկողմ. բի նման, արմաւենիի ճիւղին վերեւ՝ չԼ տառերը,  
ճիւղին ներքեւը՝ Լ տառը, զրամի ստորաբաժնին՝ ՅԿ  
տառերը:

*Հ* Ակողմ. բի նման:

Բեկողմ. բի նման, արմաւենիի ճիւղին վերեւ՝ չԼ տառերը,  
ճիւղին ներքեւը՝ Լ տառը, զրամի ստորաբաժնին՝ ՅԿ  
տառերը:

*Ը* Ակողմ. բի նման:

Բեկողմ. բի նման, արմաւենիի ճիւղին վերեւ՝ չԼ տառերը, զրամի  
ստորաբաժնին՝ ՅԿ տառերը:

*Թ* Ակողմ. բի նման:

Բեկողմ. բի նման, ոչ մէկ նշանարելի տառ:

Աղիւակ 1. Ցուցակագրութիւն Տիգրան Բ.Ի չորեքրամեաներուն

թիւ ԱՀԳ	Բնկաղմի խորագիր	Կշիռ (կը)	Դա ՄՃ	Խճ. Ա.Բ կողմ Ապրիլ կնիք
01 19/17	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	16.37	Ա կ	Ա.1 01 02 Են
02 19/17	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.82	Ա կ	Ա.1 03 04 ԼՍ/ՃԲ
03 19/17	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.28	Ա կ	Ա.1 05 06 ԿՆԱ. XV-247
04 19/17	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.63	Ա կ	Ա.1 05 08 ԿՆԱ. XXVII-6
05 19/17	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.18	Ա կ	Ա.1 05 10 ԼՍ/ՃԲ
06 19/17	[Վ]ԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.66	Ա կ	Ա.1 07 12 ԼՍ/ՃԲ
07 19/17	ՎԱԾԼԵԶՏ[Ս] ՏԻՇՐԱՆՈՒ	15.35	Ա կ	Ա.1 07 12 ԱՀ XVIII-2-132
08 19/17	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.45	Ա կ	Ա.1 09 14 ԶՀ
09 19/17	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	14.93	Ա կ	Ա.1 09 16 ԿՆԱ. XIV-197
10 19/17	[Վ]ԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.28	Ա կ	Ա.1 09 02 ԿՆԱ. XXV-387
11 19/17	ՎԱԾԼԵԶՏ [Տ]ԻՇՐԱՆՈՒ	15.63	Ա կ	Ա.2 11 18 Են
12 19/17	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ[Ս]	15.53	Ա կ	Ա.2 13 20 ԳՀ 173-495
13 19/17	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.32	Ա կ	Ա.2 15 22 ԶՀ
14 19/17	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.56	Ա կ	Ա.2 15 22 ԼՍ/ՃԲ
15 19/17	ՎԱԾԼԵԶՏ[Ս] ՏԻՇՐԱՆՈՒ	15.49	Ա կ	Ա.2 15 22 Են
16 19/17	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.08	Ա կ	Ա.2 17 24 Են
17 19/17	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.08	Ա կ	Ա.2 19 26 ԶՀ
18 18/19	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.59	Թ կ	Բ1 21 28 Են
<i>ակողմ՝ կրկին զարնուած ճակտին ու քթին վրայ</i>				
19 18/19	ՎԱԾԼԵԶՏ[Ս] ՏԻՇՐԱՆՈՒ	15.08	Թ կ	Բ1 21 30 Են
20 18/19	[Վ]ԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.46	Թ կ	Բ1 23 32 ԿՆԱ. XX-171
21 18/19	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.39	Թ կ	Բ1 25 34 Են
22 18/19	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.19	Թ կ	Բ1 27 36 ԼՍ/ՃԲ
23 18/19	ՎԱԾԼԵԶՏ[Ս] ՏԻՇՐԱՆՈՒ	15.33	Թ կ	Բ1 29 38 ԿՆԱ. XXXI-292
24 18/19	ՎԱԾԼԵԶՏ[Ս] ՏԻՇՐԱՆՈՒ	15.79	Թ կ	Բ1 29 40 ԿՆԱ. XXXI-291
25 18/19	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.40	Թ կ	Բ1 29 42 ԿՆԱ. XXVII-8
26 18/19	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.54	Թ կ	Բ2 31 44 ԿՆԱ. XXXI-290
27 18/19	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.58	Թ կ	Բ2 33 46 Են
28 18/19	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.48	Թ կ	Բ2 33 46 Են
29 18/19	[Վ]ԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.55	Թ կ	Բ2 33 48 ԿՆԱ. XVI-203
30 18/19	[Վ]ԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.42	Թ կ	Բ2 35 50 ՃԿ
31 20/41S <sup>19</sup>	ՎԱԾԼԵԶՏ ՏԻՇՐԱՆՈՒ	15.63	Փ դ	Գ 37 52 Են

19. Այն զրամը, որ Զարեհ Պառևկեանի կողմէ վկայակոչուած թիւն քիչ մը տարբերութիւն ունի, սատցած է «Տօնառը Պառևկեանի թիւնին կողքին»:

թիւ ԱՀԳ	Բնկողմի խորագիր	Կշեռ (կր)	ԳՏ ՄՇ	Խմբ. Ա-Բ կողմ Աղբիր	Կնիք
32 20/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.62	Ջ Ք	Դ 37 54	ԵՆ
33 20/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝ[ΟΥ]	15.22	Ջ Ք	Դ 39 56	ԵՆ
34 20/41S	ΒΑΣΙΛΕΩ[Σ] ΤΙΓΡΑΝΟ[Υ]	15.10	Ջ Ք	Դ 39 56	ԼԱ/ՃԲ
35 20/41S	[Β]ΑΣΙΛΕΩ[Σ] ΤΙΓΡΑΝΟΥ	14.27	Ջ Ք	Դ 41 58	ԼԱ/ՃԲ
36 20/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	14.23	Ջ Ք	Դ 43 60	ԼԱ/ՃԲ
37 20/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	—	Ջ Ք	Դ 43 62	ԿԱ; IV 93-8
38 35/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟ[Υ]	16.02	Ջ Ք	Դ 45 64	ՆՖԱ. XXXI-294
39 35/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.96	Ջ Ք	Դ 45 66	ՆՖԱ. XXXI-293
40 35/41S	[Β]ΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	—	Ջ Ք	Դ 45 68	ԹԱ 98-666
41 35/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟ[Υ]	15.58	Ջ Ք	Դ 47 70	ԿԱԱ. XXVII-9
42 22/23	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.50	Ճ	Դ1 49 72	Դ2 175-517
<i>բեկողմ՝ կրկին զարնուած</i>					
43 22/23	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.42	Ճ	Դ1 51 74	Դ2 173-496
44 22	[Β]ΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.31	Ճ	Դ2 53 76	Դ2 171-435
45 22	ΒΑΣΙΛΕΩ[Σ] ΤΙΓΡΑΝΟΥ	15.31	Ճ	Դ2 55 78	ՃԱ
46 23S/21	ΒΑΣΙΛΕΩΣ [Τ]ΙΓΡΑΝΟΥ	15.38	Ճ	Ե1 57 80	ԵՆ
47 23S	ΒΑΣΙΛΕΩ[Σ] ΤΙΓΡΑΝΟΥ	15.60	Ճ	Ե2 57 82	ԵՆ
48 23S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.43	Ճ	Ե2 57 84	Դ2 174-371
49 23S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.40	Ճ	Ե2 57 84	Ժ
50 23	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.61	Ճ	Ե2 59 86	ԱՆԱ 92 7007
<i>ակողմ՝ զարդարուած արքայական ժապաէն</i>					
51 22/23	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	14.95	Ճ	Ե2 61 88	Հ2
52 22S/23	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.26	Ճ	Զ 63 90	ԼԱ
<i>ակողմ՝ վեց թեւանի ասաղ խոյրին վրայ (*)</i>					
53 24	[Β]ΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	16.21	Դ	Է1 65 92	Դ2 175-519
54 24	[Β]ΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.44	Դ	Է1 65 92	ԿԱ XVI-1-136
55 24	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.36	Դ	Է1 65 92	ՃԱ
56 24	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.86	Դ	Է1 65 94	ՆԺ
57 24	ΒΑΣΙΛΕΩ[Σ] ΤΙΓΡΑΝΟΥ	15.48	Դ	Է1 65 96	ՃԱ
58 24	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.77	Դ	Է1 65 98	ԵՎ Spr 93-76
59 24	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.82	Դ	Է1 65 100	Հ1 64-303
60 24	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.89	Դ	Է1 65 102	ԿԱԱ. XXVII-7
61 25	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.98	Վ	Է2 65 104	ՆՖԱ. XXIX-176
62 25	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.59	Վ	Է2 65 104	ԵՆ
63 26	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.21	(+) +	Ը 67 106	ՃԱ

թի ԱՀԳ	Ընկողմի խորագիր	Կշիռ (կր)	Գճ	Մթ	Խմբ. Ա-Բ կողմ Աղբիք	Կմիր
64 29S	[Վ]ԱՍԻԼԵՈՂ[Ս] ՏԻՐԱՆՈՒ	15.56	*.Δ,Μ,Η	Թ-	69 108	ԵՇ
	բեկողմ՝ կրկին զարդուելու հետքերը, ԱՄ					
65 29S	ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	14.39	*.Δ,Μ,Η	Թ-	69 108	ԵՇ
66 33	ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	15.68	Ա,Հ	Ժ	71 110	ԿմԱ. XXVIII-760
67 33S	[Վ]ԱՏԻԼԵՈՂ[Ս] [Տ]ԻՐԱՆՈՒ	15.37	Ա,Հ	Ի	71 112	ԿմԱ. XX-173
68 33S	ՎԱՏԻԼԵՈՂ[ՕՂ] ՏԻՐԱՆՈՒ	15.07	Ա,Հ	Ի	73 114	Լ,Ս
69 33S	[Վ]ԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	15.26	Ա,Հ	Ի	73 116	Լ,Ս
70 34	[Վ]ԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	15.02	Թ	Ի	75 118	ԿմԱ. XVIII-194
71 28S	[Վ]ԱՏԻԼԵՈՂ[Ս] ՏԻՐԱՆՈՒ	15.89	Ա,Մ	Ի	77 120	ԹՀ 1992-156
72 28S	[Վ]ԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	15.86	Ա,Մ	Ի	77 120	ԿմԱ. XXVII-76
73 28S	[Վ]ԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	15.46	Ա,Մ	Ի	77 120	ԵՇ
74 28S	[Վ]ԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	15.83	Ա	Ի	77 122	ԿմԱ. XX-172
75 28S	ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	15.18	Ա	Ի	77 122	ԵՇ
76 28	ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	15.49	Ա	Ի	77 122	Լ,Ս
77 28S	[Վ]ԱՏԻԼԵՈՂ [Տ]ԻՐԱՆՈՒ	15.58	Ա	Ի	77 122	ԿմԱ. XXVII-10
78 28S	[Վ]ԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	15.74	Ա	Ի	77 124	ԳՀ 175-518

Աղյուսակ 2. Ցուցակագրություն Տիգրան Բ. ի դրախմաներուն

թի ԱՀԳ	Ընկողմի խորագիր	Կշիռ (կր)	Գճ	Մթ	Խմբ. Աղբիք
79 49	ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	3.99	Ո	ա	ԿմԱ. XXV-216
	ակողմ՝ ասուղ խոյրին վրայ				
80 60	ՎԱՏԻԼԵՈՂ ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	3.93	Է,Ա	թ	ԵՇ
81 64S	ՎԱՏԻԼԵՈՂ ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	3.74	Է,Ա	զ	ԵՇ
82 75S	ՎԱՏԻԼԵՈՂ ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	3.92	Հ,Ա,Հ,Է	դ	ԳՀ 173-497
83 75	ՎԱՏԻԼԵՈՂ ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	4.15	Հ,Ա,Հ,Է	ե	ԿմԱ. XXVII-11
84 76	ՎԱՏԻԼԵՈՂ ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	4.13	Հ,Ա,Հ,Է	զ	ՀԿ
85 78S	ՎԱՏԻԼԵՈՂ ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	3.76	Հ,Ա,Հ,Է	է	ԵՇ
86 83	ՎԱՏԻԼԵՈՂ ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	4.00	Հ,Է	թ	ԵՇ
87 87	ՎԱՏԻԼԵՈՂ ՎԱՏԻԼԵՈՂ ՏԻՐԱՆՈՒ	3.80		թ	ԳՀ 163-495

## Արծաթ դրամներու չափագիտութիւն

Քննելով Զարեհ Պտուկեանի Արտաշէսան հարստութեան դրամները զիրքին չափագիտական տուեալները, կը նշմարենք թէ չորեք զրամեաններու մեծամասնութեան ծանրութիւնը կը փոփոխուին 15 և 16 կրամի միջնեւ, այսինքն՝ կշիռները ունին քանի մը կրամ ելեւէջ: Ամէնէն ծանր զրամը 16.42 կրամ է, որ կը գտնուի Լոնդոնի Բրիտանական Թանգարանը<sup>20</sup>. իսկ ամէնէն թեթեւը՝ 13.60 կրամ, երեւանի Հայատանի Պատմութեան Պետական Թանգարանը<sup>21</sup>: Սոյն զիրքին մէջ կայ զրամ մը, որ ունի 5.1 կրամ կշիռ. ասիկա կարելի է անտեսել իբրև ապագրական սիսալ մը<sup>22</sup>: Ինչպէս նաեւ կան արծաթազօծ (fourrée) չորեքդրամեաններ, որոնց կորիզը կրնայ պղինձ ըլլալ. սակայն միայն մակերեսը արծաթ ունի. ասոնք ալ համեմատութեան ծիրէն դուրս պէտք է մնան<sup>23</sup>:

Կրամ

Խումբ

Քարտեզ 1. Զորեքդրամեաններու խումբերու համեմատութիւն

Ուրեմն, Տիգրան Մեծի արծաթ զրամներուն չափագիտութիւնը պարզ ու յստակ է և ունի որոշ կշիռ մը: Դրամահատներ ջանացած են չորեքդրամեանները սահմանափակել ընդհանուր առմամբ 15 կրամէն

20. ԳՏՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, ԱՀԴ, թիւ 29:

21. ԳՏՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, ԱՀԴ, թիւ 21:

22. ԳՏՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, ԱՀԴ, թիւ 17:

23. ԳՏՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, ԱՀԴ, թիւ 43-48:

մինչեւ 16 կրամ բարձրորակ արծաթ մհատաղով։ Կատարեալ պերճախօսութեամբ՝ այս կը ցուցադրուի աղիւսակ Յին մէջ, ուր 76 չորեք-զրամեանի 68 հատը (90%) ունի կշռի տարածում 15.01 կրամէն մինչեւ 16.00 կրամ<sup>24</sup>։ Չորեքզրամեաններու տասներեք խումբերը եւ իրենց միջինը գծուած է քարտէզ 1ին վրայ, ուր կարելի է նշմարել ու համեմատել, թէ միջինին կշռոները 15 եւ 16 կրամի միջեւ կը մնան։

### Աղիւսակ 3. Չորեքզրամեաններու կշռի տեղաւորում

	14.00	14.26	14.51	14.76	15.01	15.26	15.51	15.76	16.01	16.26	
Տիպ	14.25	14.50	14.75	15.00	15.25	15.50	15.75	16.00	16.25	16.50	Գումար
Ա.				1	3	6	5	1		1	17
Բ.					2	6	4	1			13
Գ.	1	1			2		3	1	1		9
Դ.						4					4
Ե.						3	2				5
Զ.			1			1					2
Լ.						3	1	5	1		10
Ը.					1						1
Թ.		1					1				2
Ժ.							1				1
Ի.					1	2					3
Լ.						1					1
Խ.					2	1	2	3			8
Գումար	1	2		2	12	26	19	11	2	1	76

Դրախմային կշռու ունի չորեքզրամեանի քառորդ ծանրութիւնը եւ մէկ կրամի շուրջ ելեւէջ։ Ամէնէն ծանր զրամիման 4.61 կրամ է, իսկ թեթեւը՝ 3.22 կրամ։ Երկուքն ալ կը սպահանուին Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանի ժողովածոյին մէջ<sup>25</sup>։

24. «Դրամագիւտ»ի թիւ 37 և 40 դրամներու կշռոները անծանօթ ըլլալով, աղիւսակ 3(ն զույրս մնացին)։

25. ՊՏՈՒԹԵԱՆ ԶՈՐԵՀ, ԱՀԿ, թիւ 75 և 54, նոյն կարգով։

Վիեննայի Միսիթարեան Թանգարանին մէջ կան երեք շատ փոքր եւ թեթև դրախմաներ<sup>25</sup>, որոնք պէտք է նկատուին բացառութեանց շարքին: Դրամահատներ ջանացած են դրախման սահմանափակել 4 կրամով: Քննարկուած «զրամապիտա» դրախմաներուն կշնոր կը փոփոխուի 3-74 կրամէն մինչև 4-15 կրամ, ինչպէս կարելի է եղանացնել աղիւակ 2ի տուեալներէն:

Ուսումնասիրուած չորեքդրամնեաններուն եւ դրախմաններուն կրշաները չեն հակասեր, այլ կը համաձայնին Զարեհ Պտուկեանի բանասիրութեան կորպուսին մէջ ցուցակագրուած դրամներու չափագիտական տուեալներուն<sup>26</sup>:

### Դիմանկարային արուեստ

Հայաստանի հին շրջանի դրամները յուշաբճաններ եւ աղբիւրներ են հայ ժողովուրդի պատմութեան եւ մշակոյթի արուեստին համար: Այս տեսակէտէն իր առաջնակարգ տեղը կը դրաւէ Արտաշէսան հարբսութեան դրամները եւ յատկապէս Տիգրան Մեծի եւ Արտաւագդ Բ.ի չորեքդրամնեանները: Դրամներուն վրայ քանդակուած զիմանկարը, արքայական ծիրանին, դրամահատութեան ոճը, պատմական տուեալներու զրուագումը՝ հին ժամանակաշրջանէն մեղի հասած է մետաղագործութեան գեղարուեստին միջոցաւ, թէնու ենթարկուած յունական մշակոյթի աղբեցութեան:

Տիգրան (140-55 Ն.Ք.) 45 տարեկան էր 95 Ն.Ք., երբ ժառանգեց Արտաշէսան հարստութիւն զահը: Ինք մահացաւ խոր ծերութեան մէջ 85 տարեկանին<sup>27</sup>: Իր չորեքդրամնեաններուն վրայի զիմանկարները կը պատկերացնեն արքան՝ իր կեանքի տարբեր հանգրուաններուն: Դիմանկարները ունին պատանիի անմեղ եւ սիրուն կեցուածքը (Աղիւակ 1, թիւ 1-10), վայելչակազմ երիտասարդի խրօսաւ ու առնական արտայայտութիւնը (Աղիւակ 1, թիւ 31-41), ինչպէս նաև չափահան անձի խոհեմութիւնն ու հեռատեսութիւնը (Աղիւակ 1, թիւ 63-69): Արդար ըլլալու համար պէտք է յիշել, թէ հակառակ որ Տիգրան հասուն մարդ էր երբ զահ բարձրացաւ, գրամներու կնիքներուն փորագրիչները քանդակած են իր զիմանկարը աւելի երիտասարդ կամ ալ Տիգրան շատ աւելի երիտասարդ զիմագիծի երեոյթ ունեցած ըլլալու է քան թէ իր արքիքը: Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանի ժո-

25. ՊՏՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, Ա.Հ.Դ, թիւ 75 և 54, նոյն կարգով:

26. ՊՏՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, Ա.Հ.Դ, թիւ 88-90:

27. ՊՏՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, Ա.Հ.Դ, թիւ 10-87:

28. Հայկական սովիտական համբագիտարան, երեսան, 1985, հասոր ԺԱ. էջ 697:

զովածոյին մէջ կը գտնուի չափազանց հազուագիւտ չորեքդրամիան մը, արձանագրուած՝ «Արքայից Արքայ Տիգրանի» յունաստան մակղիբով, ունենալով ՀՃ, A, ՅԿ մէնագիրները: Լսու Խ. Ա. Մուշեղեանի, այս դրամը զարնուած է 74 Ն.Ք., այսինքն երբ Տիգրան 66 տարեկան էր<sup>29</sup>: Զորս անգամ մեծցուած այս նկարը կը ցուցնէ կորովի երիտասարդ Տիգրան մը, խորիս՝ առնական ու արքայական զիմագիծով: Տարի մը ուշ, 73 Ն.Ք. կտրուած (Փարփղի Աղքային Մատենադարանի ժողովածոյէն, մէնագիրներ՝ ՀՃ, ՅԿ), չորեքդրամիանի մը վրայ «Արքայից Արքայ Տիգրանի» մակղիբով, զարձեալ Տիգրանը կը նշարենք իր տարիքին անհամապատասխան չափահաս մարդու մը զիմագիծով<sup>30</sup>:

Տիգրանի կիսանդրին կերտուած է մաքուր ածիլուած զէմֆով՝ ըստ յունական աւանդութեան, գոհարագարդ բարձր խոյրով և արքայական ժապաւէնով: Իր դրամներու ետին՝ Անտիոք քաղաքի զիցուհին նստած է Տիգիլոս լեռան վրայ, զիտուն բրդածեւ թագ, ձեռքին արմաւենիի ճիւզ, ոտքերուն տակ Ռոռնդէս գետի անձնաւորումը՝ լողացող մարդու կերպարանքով: Տիգրան առաջին անգամ իր չորեքդրամիանին ետին դրուագեց Անտիոքի աշխարհանչակ զիցուհիին ոսկեզօծ բրոնզէ արձանը, քանդակուած՝ Սիկիոնի նուտիշիակսին կողմէ<sup>31</sup>:

Տիգրան Մեծի զիմանկարային արուեստը քննարկուած է քանիցու այս բնագաւառով զրազող զրամագէտներու կողմէ՝ Ե. Թ. Նիւուէլ<sup>32</sup>, Գ. Կ. Ժենկինս<sup>33</sup>, Ժ. Բարեկոն<sup>34</sup>, Գ. Ա. Տիրացեան<sup>35</sup>, Ժ. Մ. Կ. Թոյն-րի<sup>36</sup> և ուրիշներ: Հեղինակներու այս հոյլը կը նկատէ Տիգրանի չորեքդրամիանը զարնուած՝ ըստ յունական տիրապետող լաւագոյն զրամահաստութեան արուեստին: Դիմաքանդակը ունի զասական նըրբութիւն մը և կը գերազանցէ նախորդ սիեւեկեան վերջին թագաւորներու զիմանկարային արուեստը: Զեւով մը նուիրապետական, այսինքն զարագարապաշտ ու իրապաշտ զիծերը միաձուլուելով՝ կերտեցին ազնուածանացած ու աստուածացած զիմանկար մը, որ դարերու բնդէջն անմահութիւն կը ճառագայթէ:

29. ՄՈՒԾԵՂԵԱՆ Խ. Ա., Հայաստանի դրամական զամենը, Երեւան, 1973, էջ 48, սասակ Հիմներորդ տասնամյակ:

30. BABELON E., *Les Rois de Syrie, d'Arménie et de Commagène*, Փարփղ, 1890, տասնակ XXIX, թիւ 15:

31. HILL G. E., *Historical Greek Coins*, I. Անդան, 1906, էջ 164:

32. NEWELL E. T., *Royal Greek Portrait Coins*, Իլյուն, Արքանամին, 1937, էջ 56-59:

33. JENKINS G. K., *Ancient Greek Coins*, Նիւ Եորք, 1972, էջ 271-272, նկար 663-664:

34. BABELON J., *Le portrait dans l'antiquité d'après les monnaies*, Փարփղ, 1950, էջ 197, տասնամյակ VII, թիւ 7:

35. ՏԻՐՈՅԵԱՆ Գ. Ա., «Armenian Portrait Art in the Coins of Tigranes II and Artavasdes II», Հայ Իրամանդիտական Համեսէ, Ա. յըհան, Հայ, ԺԲՀ, թիւ 2, էջ 29-42 (Հայերէն ամփոփուած):

36. TOYNBEE J. M. C., *Roman Historical Portraits*, Իթակա, Նիւ Եորք, 1978, էջ 131-133:

### ԿԾԻՔՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Տիգրան արքայի կիսանդրին քանդակուած է իր բոլոր զրամներու առաջին կողմին վրայ. իսկ մեր «զրամագիւտ»ի բոլոր արձաթներուն ետին զրուագուած է Բախտը և լուղորդը: Դրամ թիւ 66 և 67 (խումբ Ժ և Ի), կնիք թիւ 71, կրնայ նկատուիլ բացառութիւն մը: Բացի այս երկու զրամներէն՝ իրարու նման զրամներ գոյութիւն չունին երկու տարրեր խումբերու միջեւ: Նոյն խումբին մէջ շատ զրամներ կան, զարնուած՝ նոյն կնիքէն: Անձ մը կրնայ եղրակացնել, թէ հոս ներկացոցուած զրամներէն ոմանք, անկասկած, կազմած են զրամագիւտի մը մասը: Եօթանասունութ չորեգրամնեաներ զարնուած են 39 ակողմի և 62 բեկողմի կնիքներով:

Կնիքներու մեծամասնութիւնը նախապէս տեղեկագրուած է, թերեւս նպատակայրմար պատճառներով բոլորը չեն ներկայացուած Պոտոկեանի Արտաշէսան հարստութեան դրամները զիրքին տախտակներուն վրայ: Տիգրանի պատանիի զիմանկարին (խումբ Ա1) զծագրութիւնը նախապէս հրատարակուած է Մորգանի կողմէ<sup>37</sup>: Խումբ Գի մենագիրները Պտուկեանի կողմէ հրատարակուած են, սակայն երկու տարրեր զրամներու համին, ինչպէս որ կը նշմարուի տախտակներուն վրայ<sup>38</sup>:

Կնիքներ 63, 108, 112-116, 77, 120, 122, 124 (վեցթեւանի աստղ.  
\*, Δ, Μ, Η, Θ, Տ. նոր զիմաննկար. A, M, A. նոյն կարգով) կը պատկանին Զ, Թ, Ի և Խ խումբերու. բոլորն ալ նորութիւններ են ու ցարդ չեն ներկայացուած: Այս զրամներուն վրայ երեցող նոր տառներու մենագիրները, ինչպէս նաև կնիք 77ի զիմաննկարը պէտք է նկատուի այս «զրամագիւտ»ին մեծագոյն նպաստը հայ զրամագիւտութեան յառաջդիմութեան:

### ՄԵՅԱԳԻՐՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԻՆ ԱՐՁԱՐ ՀՐԱՄՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Տիգրան Մեծի զրամները թողարկուած են իր կայսրութեան բազմաթիւ զրամահատարաններուն մէջ: Չորեգրամնեանները թողարկուած Դամակոս՝ թուազրուած են ըստ սեղեկեան տոմարակալութեան (ունենալով 312 Ն.Ք. իբրև թուազրութեան սկիզբը): Բոլոր

37. DE MORGAN J., *Manuel de Numismatique orientale de l'Antiquité et du moyen âge*, *Փարփակ*, 1923-1936, էջ 192, նկար 215:

38. ՊՏՈՒԿԵԱՆ ԶԱՐՈՅՆ, ԱՀԴ, տախտակ 2-3, թիւ 20 և 41:

զրամագէտները կը համաձայնին, թէ Դամասկոսի չորեքդրամեաններուն վրայի թուականները (ԱՄԾ = 72-71 Ն.Ք., ԲՄԾ = 71-70 Ն.Ք., ՀՄԾ = 70-69 Ն.Ք.)<sup>39</sup> կը համապատասխանեն այն շրջանին, երբ ինք դրաւեց ու իշխեց Դամասկոսի վրայ (72-69 Ն.Ք.): Չորեքդրամեանները թուականներ Արտաշատ, Անտիոք, Տիգրանակերտ եւ այլ անորոշ դրամահատարաններ, կարիք ունին դրամագիտական հետազոտութեանց՝ սելեւկիան դրամներու ուսումնասիրութեան ծիրին մէջ:

Չորեքդրամեաններուն վրայ, զաշտի աշխն, արժաւենիի ճիւղին աչ կողմը, զրոշմուած են՝ Ա, Թ, Պ, Վ, (Փ), Հ; Բախտի ձախին՝ \*, Δ, Μ, Ժայռին վրայ՝ |, ՞, Պ, Ց, +, ԱՄ, Ա:

Հստ Պտուկեանի, մենագիրներուն իմաստը անորոշ է, «Չորեքդրամեաններու թեկողմը ունի փակագիրներ: Ինչպէս սելեւկիան դրամներու փակագիրները, ասոնք ալ հաւանաբար կու տան տարրեր արտադրութիւններ եւ թերեւս ալ մաս կը կազմեն հաշուապահական զրութեան մը»<sup>40</sup>: Ճործ Մակ Դոնալդ կը զրէ, «Բաղդաստութիւններու արդիւնքը անօգուտ եղած է: Միայն ասպահով կերպով կարելի է ըսկէ, որ կասպակցութիւններէ ոմանք կ'երեւի թէ կը ներկայացնեն դրամահատարանի տնօրէններուն անունները»<sup>41</sup>: Կիրա Ֆուս ունի ծաւալուն քննարկութիւն մը նորիրուած Տիգրանի դրամներուն: Ֆուս չունի ս'րեւէ լուծում եւ կը թելազրէ թէ «Պատմական նկատառումներ աւելի իմաստալից փաստ սիտի ցոյց տան»<sup>42</sup>: Հիմնուած դրամի ոճին վրայ, ֆուս կը թելազրէ նշանակել չորեքդրամեաններու յատուկ խումբերը որոշ դրամահատարաններուն<sup>43</sup>:

Դրամաններուն վրայ, արժաւենիի ճիւղին վերեւ զրոշմուած են Ո, ԵԼ, ՀԱ, Ճ մենագիրն ու տառերը. արժաւենիի ճիւղին տակը՝ Դ, Թ, Ի, Ա տառերը. սառարածնին՝ ՀԿ, ՀԸ տառերը:

Պտուկեանի կարծիքն է թէ «... Անկարելի է գոհացուցիչ պատասխաններ տալ ոտյն գիրերու նշանակութեան մասին: Թերեւս անսնք ունին մասնաւոր նշանակութիւն մը եւ կամ ալ փողերանոցի սեսին նշաններն են»<sup>44</sup>: Ճ. Մակ Դոնալդ արժաւենիի ճիւղին վրայի տառերը ( $\Delta\Lambda = 34$ , ԵԼ = 35, ՀԱ = 36) կը համարէ թուազրական համակարգ մը»<sup>45</sup>: Կ. Ֆուս կ'ընդլայնէ գահակալութեան այս տարիները 38ի (ՀԱ =

39. MAC DONALD GEORGE, «The Coinage of Tigranes I», Numismatic Chronicle, Դ. չորսն, Հա. Բ., 1902, էջ 200: NEWELL EDWARD T., Late Seleucid Mints in Ake-Ptolemais and Damascus, Նիւերը, 1939, էջ 107, թիւ 147-149: ՊՏՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, ԱՀԿ, Catalogue, էջ 7-8, թիւ 12-14:

40. ՊՏՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, ԱՀԿ, էջ 14:

41. MAC DONALD G., ՆՀԱՆ աշխատանք, էջ 195:

42. FOSS CLIVE, «The Coinage of Tigranes the Great», Numismatic Chronicle, Հա. 146, 1986, էջ 26-38:

43. ՖՈՒՍ, ԵՂԱԼ աշխատանք, էջ 65-66:

44. ՊՏՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՀ, ԱՀԿ, էջ 17:

37,  $H\Lambda = 38$ <sup>46</sup>; Հ. Աչքիրիկ<sup>47</sup>, Ե. Բաբելոն<sup>48</sup>, Ճ. Մակ Դոնալդ<sup>49</sup>, Ա. Ն. Զոգրաֆ<sup>50</sup>, և այլ. Մուշեղեան<sup>51</sup> կը համարեն թուագրական համակարգ մը: Հիմնուած զրամներուն արձանագրութեանց վրայ՝ Բաբելոն կը թելագրէ, թէ փիւնիկեան վաճառաշահ թրիփոլի եւ Միդոն քաղաքներուն մէջ ընդունուած տոմարը գործածուած կընայ ըլլալ: Հոս 111 Ն.Ք. թուականը կը համարուէր ժամանակագրութեան սկիզբը: Մակ Դոնալդ կը յիշէ թէ Տիգրան, իբր ժառանգորդը Փիլիպոս Փիլադելֆոսի սաացուածքին, գործածեց Բաբելոնի քննարկած համակարգը: Հրատարակուած բոլոր զրամաներուն վրայի տառերը մանրամասնութեամբ կը քննարկուին Մուշեղեանին կողմէ, ուր տարեթիւերը կ'ընդլայնուին մինչեւ 39 (ԹԱ): Յասպիսով  $\Delta\Lambda = 34$  կը հաւասարի 111—34 = 77 Ն.Ք. թուականին (ԵԱ = 76, չԱ = 75, ԶԱ = 74, ՀԱ = 73, ԹԱ = 72): Յայնարերուած տարեթիւերը կ'իշնան Տիգրան Մէծի զահակալութեան յաջողագոյն տարիներուն: Ուրեմն, խնդրոյ առարկայ «զրամագիւտ»ի զրամանեները թողարկուած են 76 եւ 75 Ն.Ք.:

Բախտին բանած ճիւղին տակի կենդրուական մենագիւները, ըստ Կ. Մուշեղեանի, թողարկման յաջորդականութիւնը կամ ամիսները յիշատակելու իմաստով արձանագրուած յունարէն տառեր են<sup>52</sup>:

Բոլոր զրամանագէները չեն ընդունած վերեւ ներկայացուած քըննարկութիւններն ու տեսակէտերը: Եթէ այս վիճելի կէտերը զոհացուցիչ կերպավ պիտի պատասխանուին և ընդունելի ըլլան համայն վրամագէններուն անխտիր, լայնատարած զրամագիտական հետազոտութիւն հարկաւոր է, չին յունական զրամներու ծիրէն ներս, թողարկուած՝ Մելելիա եւ հիւսիսային Միջագետք:

### Նզրակացութիւն եւ ամփոփում

Լուս վստահելի ազրիւրի մը, խնդրոյ առարկայ «զրամագիւտ»ը բաղկացած է Տիգրան Մէծի 80 կոտր արծաթեայ զրամներէն: Առանց ո՛րեւէ զրամագիտական տեղեկութիւն քաղելու, «զրամագիւտ»ը ցիր

45. MAC DONALD G., Նշուած աշխատանք, էջ 197:

46. ՖՈՍ, Նշուած աշխատանք, էջ 25:

47. SEYRIG H., «Trésor Monétaires de Nisibos», Revue Numismatique, Ամէն Ե., Համ. Ժ. 1955, էջ 112-116:

48. BABELON E., Les Rois de Syrie, d'Arménie et de Commagène, Փարիզ, 1890, էջ CLXIX.

49. MAC DONALD G., Նշուած աշխատանք, էջ 198:

50. ՅՈՂՐԱՓ Ա. Ի., Անտառական մոնետы, Մուկուս, Լենինգրադ, 1951, էջ 87, (ռուսերէնով):

51. ՄԱՒԾԵՂԵԱՆ Խ. Ա., «Արտաշատի հայկական գանձը», Հայ դրամագիտական Հանդես, շընական Ա., Համ. Դ., 1978, էջ 105-124:

52. ՄՈՒԾԵՂԵԱՆ Խ. Ա., Նշուած աշխատանք:

ու ցան եղած ու տարածուած է զանազան վայրեր: Վաճառականներուն եւ դրամահաւաքներուն հնա շփում հաստատուեցաւ, հնագիտական դրամներու վաճառքի եւ աճուրզի ցուցակագրութիւնները քննուեցան, քաղելու համար անհրաժեշտ տեղեկագրութիւնը եւ վերակադրելու ընծայուած «դրամագիւտօք: Ընդունելի է, թէ ներկայ ցուցակագրութիւնը կրնայ պարունակել դրամներ, որոնք դրամագիւտին մասը կազմած ըլլան եւ պատկանած ըլլան սեփական հաւաքածոյի մը կամ դանառականի մը պահեստի հաւաքածոյին:

Հիմնուած դրամի երեսին դիմապատկերին, խոյրի ոճին եւ ետեւի տառերուն ու մենագիրներուն վրայ՝ չորեքդրամնեանները զատուեցան տառներեք խումբերու: «Դրամագիւտա»ին 78 չորեքդրամնեանները զարդուած են 39 երեսի ու 62 կոռակի կնիքներով: Կնիքները, որոնք չեն տեղեկագրուած Զարեհ Պառուկեանի Սրտաշչեան հարստութեան դրամները գիրքին մէջ, կը պարունակեն խոյրին վրայի վեց-թեւանի ասուղ մը (կնիք 63), ակողմի նոր զիմապատկեր մը (77), և նոր տառեր կամ մենագիրներ ու անոնց կապակցութիւնները՝ \* , Δ, M, H (108), Փ, Հ (112-116), A, M (120), A (122, 124):

Դորեքդրամներու եաին արձանագրուած են յունատառ ԱԱԾԼԵΩΣ ՏԻΓՐԱՆΟΥ եւ կը պատկերացնեն Անտիոքին Բախսը: Դրամագիտներ կը համաձայնին, թէ այս դրամները թողարկուած են Անտիոք: Ցարդ դրամագիտներ չեն կրցած համաձայնիլ գաշտին մէջի եւ ժայռին վրայի տառերուն ու մենագիրներուն իմաստի մասին:

Ներկայ «դրամագիւտօքին բոլոր դրամանները իրարմէ տարրեր են: Առաջնոր ունի ԱԱԾԼԵΩΣ ՏԻΓՐԱՆՈՒ յունատառ արձանագրութիւնը: Հաւանարար կոխուած ըլլայ սեփեկեան փողերանոց մը, ուր ԱԱԾԼԵΩΣ ՏԻΓՐԱՆՈՒ արձանագրութեամբ չորեքդրամնեաններ կոխուած են: Միւս ութիր դրամանները ունին ԱԱԾԼԵΩՍ ՎԱՍԻԼԵΩՆ ՏԻΓՐԱՆՈՒ յունատառ արձանագրութիւնը: Դրամագիտներ կը համաձայնին, թէ դրամանները կոխուած են Մեծ Հայք, հաւանարար Արտաշատի փողերանոցը եւ արձանագրուած՝ 35, 36 (ԵԼ, չԱ): Բազմաթիւ դրամագիտներ կը նկատեն այս թուանշանները իրեւ զահակառութեան տարի մը կամ թուագրութիւն մը: Հ. Ակըրիկ, Ե. Բարեխան, Գ. Մակ Դոնալդ, Ա. Ն. Զոգրաֆ եւ Խ. Ա. Մուշեղեան կը նկատեն թուագրութիւն մը: Հիմնուած դրամին արձանագրութեանց ոճին ուսումնասիրման վրայ՝ Բարեխան կը թելագրէ թէ Հայաստան կրնայ բնդունած ըլլայ Փիւնիկիոյ տումարակալութիւնը, ուր 111 Ն.Ք. թուագրութիւնը ժամանակագրութեան սկիզբն էր: Ուրեմն, մեր «դրամագիւտա»ին եօթ դրամները կոխուած կրնան ըլլալ 76 եւ 75 Ն.Ք.:

Հայ դրամագիտութիւնը տակաւին ունի երկար ճանապարհ կը տեսիք, եթէ խորհրդաւոր շղարչը պէտք է վերցուի եւ հայկական դրամներուն վրայի տառերուն եւ մենագիրներուն իմաստը վերծանուի ու

ըլլայ մատչելի եւ ընդունելի բոլոր զրամագէտներուն։ Յուսալի է, որ յառաջիկային, զրամագիտական հետազոտութիւնը լուծէ հայ զրամագիտութեան գաղտնիքները եւ պատասխանէ բոլոր այն հարցումներուն, որոնք ցարդ կը մնան հայ զրամագիտութեան մութէ էջերը։

### ՑԱԼԵԼՈՒԾ

Ներկայ յօդուածը շարուած ու մամուլի տակ էր, երբ յաւելեալ տեղեկութիւն յայտնաբերուեցաւ Տիգրան Մեծի արծաթեայ զրամագներուն մասին։ Նպատակայարմաք համարուեցաւ անջատ կերպով իբրև յաւելուած ներկայացնել աւելի ուշ յայտնաբերուած տեղեկութիւնը։ Ստոյգ կերպով չենք կրնար պնդել թէ շուկայի վրայ երեւցած զրամաները սկզբնական գանձին մաս կը կազմեն, բայց զրամագիտութեան տեսանկիւնն անհրաժեշտ է, որ կարելի եղածին չափ բոլոր տուեալները ի մի համախմբուին միատեղ օգտագործուելու համար։

Աղիւսակ 4. Ցուցակագրութիւնը Տիգրան Բ. ի չորեքրամեամներուն, յաւելուած

թիւ Ա.Դ.	Բնկողմբ խորագիր	կշռ (կր)	ԳԵ ՄԵ	ԽԵ Ա-Բ	կողմ կմբ	Աղբար	
01	19/17	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.21	Ա	Ա.1 09	16	Լ, 66-328
02	19/17	ΒΑΣΙΛΕΩ[Σ] ΤΙΓΡΑΝΟΥ	15.92	Ա	Ա.1 01	126	Լ.Ս
03	19/17	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.95	Ա	Ա.1 05	128	Լ.Ս
04	19/17	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.74	Ա	Ա.2 15	130	Լ.Ս
05	18/19	[ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ]	15.72	Թ	Բ.1 29	132	Ա.Օ. 93-2110
06	18/19	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.40	Թ	Բ.1 29	134	Ա.Ն.Օ. 19-1 No. 86
07	37	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	14.68		Բ.2	—	Լ.Ս
08	35/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.56	Փ	Գ 47	136	Ա.Վ. 63-84
09	35/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.26	Փ	Գ 79	138	Ա.Օ. 11-93-468
10	35/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.28	Փ	Գ 79	138	Ա.Օ. 11-93-469
11	35/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.98	Փ	Գ 43	140	Լ.Ս
12	35/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.80	Փ	Գ 43	142	Լ.Ս
13	35/41S	[ΒΑΣΙΛΕΩ[Σ] ΤΙΓΡΑΝΟ[η]]	15.69	Փ	Գ 45	144	Լ.Ս
14	35/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.79	Փ	Գ 47	146	Լ.Ս
15	35/41S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	—	Փ	Գ 81	148	Կ.Վ. Զ. 94-6
16	24	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	17.28	Դ	Ե.1 65	150	Կ.Վ. 18-4 No. 65
17	24	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	16.18	Դ	Ե.1 65	100	Լ, 66-329
18	24	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	16.16	Դ	Ե.1 65	152	Ա.Օ. 10-93-870
19	24	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.87	Դ	Ե.1 65	150	Ա.Օ. 10-93-871
20	25	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.92	Վ	Ե.2 65	104	Կ.Վ.Ֆ. XXXIII-267
21	33S	ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ	15.35	Թ, Հ	Ե.1 83	154	Լ, 66-327

Աղիւսակ 5. Ցուցակագրութիւն Տիգրան Բ. ի դրախմաներուն, յաւելուած

թիւ ԱՀԴ Բնկողմի խորագիր	Էջիս (կը)	Գն	Խճը	Աղիւսակ
22 79 ԱՎԱԼԵՈՎ ԱՎԱԼԵՈՎ ՏԻԳՐԱՆՈՅ	3.76	ՀԱ.Ե	6որ	Ար 93-2111

### Դիտողութիւններ

- Քննարկուող «զրամագիւտ»ը կամ 80 կտորէ շատ աւելի մեծ է եւ կամ մեկէ աւելի զանձերէ կազմուած է:
- Յաւելուածին մէջ կան նոր կերպներ, սակայն նորութիւններ գոյութիւն չունին. այսինքն չեն պարունակեր նոր դիմանկար կամ մենագիր:
- Վերջին քանիքու զրամներու ընդհանուր որակը աւելի բարձր է, իսկ զինը՝ աւելի նպաստաւոր: Ուրեմն, ցարդ հրապարակ իջած էին բաղզատարար վասուրակները եւ լաւագոյնները պահուած վերջաւորութեան կամ յետագային:
- Քանի որ ներկայիս զինները աւելի նպաստաւոր են քան ինչ որ էին նախապէս, կը մզուինք եղբակացնելու, թէ նոյն տեսակ արծաթները զնող զրամահաւաքները եւ թանգարանները համեմատարար նուազ են եւ չեն կրցած սպառել հրապարակ իջած «զրամագիւտ»ը կամ բոլոր «զրամագիւտ»երը:
- Վերջին քանի մը տարուան ընթացքին հրապարակ նոր իջած չորեքզրամեաններուն ընդհանուր քանակը կրնայ շատ մօտենալ Զ. Պուլկեանի զասական գրքին մէջ ցուցակագրուածներուն: Նման պարագային՝ կարելի է սպառել յաւելեալ զրամներու մուտքը զրամագիտական սպարէզ:

Եղիս. Թ. ՆԵՐՍԻՍԵԱՆ

## Summary

### A «HOARD» OF SILVER COINS OF TIGRANES II

Y. T. NERCESSIAN

According to one reliable source, the "hoard" under discussion consists of 80 pieces of silver coins of Tigranes the Great. It was dispersed to various coin dealers and collectors before pertinent data was retrieved. Various dealers and collectors were contacted, and sale and auction catalogues were reviewed to compile the present "hoard." Admittedly, the list includes some coins which came from private collections or dealer holdings and never constituted a part of this "hoard."

The "hoard" was classified according to the scheme of Paul Z. Bedoukian's *Coinage of the Artaxiads of Armenia*, where 36 different varieties of Antioch tetradrachms and 39 Artaxata drachms are classified. All of the coins presented are assumed to belong to this "hoard" and are classified in the catalogue. In Table 1, the first column in the catalogue gives the assigned specimen number. The second column references Bedoukian's corpus number. When required, the obverse and reverse of two Bedoukian corpus numbers are combined to offer the best illustrative and descriptive reference. The third column gives the reverse legend. The fourth column is the weight of the coin. The columns five and six provide reverse field letters and monograms, respectively. The seventh column indicates the group letter to which the coin is assigned. Columns eight and nine give the obverse and reverse die varieties (odd numbers to the obverse and even numbers to the reverse). The last column notes the source where the coin is preserved or was catalogued originally for sale or auction. The drachms are listed separately in Table 2 with a simplified format since all specimens are different from each other.

The tetradrachms were sorted into thirteen groups based on the style of obverse portrait, tiara design, and reverse field letters and monograms. Seventy-eight tetradrachms were struck with 39 obverse and 62 reverse dies.

Dies not reported in Paul Z. Bedoukian's *Coinage of the Artaxiads of Armenia* include six-rayed star on the tiara (die 63), an obverse new portrait (77), and new field letters or monograms and their combinations: \* $\Delta$ , M, H (108),  $\Theta$ ,  $\Sigma$  (112-116) A, M (120), A (122, 124).

All of the tetradrachms are inscribed ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ and depict the Tyche of Antioch on their reverse. Numismatists agree that these coins were issued in the mint of Antioch. So far there is no consensus on the meaning of these monograms.

All of the drachms in this "hoard" are different from each other. The first has the inscription ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ, most likely struck in a Seleucid mint where tetradrachms with ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ legend were issued. The other eight drachms are inscribed ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ. The consensus is that these were struck in Armenia proper, most likely in the mint of Artaxata. They are inscribed 35, 36 (E.A.,  $\zeta$ A). Many numismatists consider these letters his regnal year or a dating system. E. Babelon suggests that

perhaps Armenia adopted the Phoenician principle of dating where 111 B.C. was used as the reference date. By this reasoning, seven of the drachms of our "hoard" were issued in 76 and 75 B.C.

Armenian numismatics has a long distance to travel if the veil of mystery is to be removed and the meaning of field letters and monograms of Armenian coins are to be deciphered and be acceptable to all numismatists. It is hoped that in the near future numismatic research will unravel this mystery of Armenian numismatics and answer all questions which are remaining as the obscure pages of Armenian numismatics.



Տախտակ 1. Տիգրամ Բ.ի արձաքներու «դրամագիւտ» մը



8



9



10



11



12



13



14



Տախտակ 2. Տիգրան Բ.Ի արձարմերու «ղրամազիւտ» մը



15



16



17



18



19



20



21



Տախտակ 3. Տիգրան Բ.ի արծարմերու «դրամագիւտ» մը



22



23



24



15



26



27



28



Տախտակ 4. Տիգրան Բ.Ի արծարներու «դրամագիւյց» մր.



Տախտակ 5. Տիգրան Բ.ի արձարներու «դրամագիւտ» մը



36



37



38



39



40



41



42



Տախտակ 6. Տիգրան Բ.Ի արծաթներու «դրամագիւտ» մր



Տախտակ 7. Տիգրան Բ.ի արծարներու «ղրամազիւս» մը



50



51



52



53



54



55



56



Տախտակ 8. Տիգրան Բ.ի արծարներու «դրամագիւտ» մր



Տախտակ 9. Տիգրան Բ.ի արծարթերու «դրամագիւտ» մը



64



65



66



67



68



69



70



Տախտակ 10. Տիգրան Բ.ի արծարներու «դրամագիւտ» մը



71



72



73



74



75



76



77



Տախոս 11. Տիգրան Բ.ի արծար մերու «ղբամագիւտ» մը



79



78



79



80



81



82



83



84



85



86



87



88



89

Տախոս 12. Տիգրան Բ.ի արծարթերու «դրամագիւյն» մը



Տախտակ 13. Տիգրան Բ.ի արծարմերու «զրամագիւտ» մը (յաւելուած)



8



9



10



11



12



13



14



Տախտակ 14. Տիգրան Բ.Ի արծարներու «դրամագիւթ» մր (յաւելուած)



Տախտակ 15. Տիգրան Բ.ի արծարթերու «դրամագիւտ» մը (յաւելուած)